

ԱՍՏՈՒԾ ՀԱՒԱՏԱՑԵԱԼՆԵՐԸ ԿՐ ՓՐԿԷ ԻՐԵՆՑ ՓՈՐՁՈՒԹԻՒՆՆԵՐԷՆ

1.- Ձեզի մարդկային փորձութենէն զատ ուրիշ բան չէ պատահած, բայց Աստուած հաւատարիմ է, որ ձեզ պիտի չթողու, որ ձեր կարողութենէն աւելի փորձուիք, հապա փորձութեանը հետ ազատութեան միջոց մըն ալ պիտի տայ, որպէսզի կարող ըլլաք համբերել: (Ա. Կորնթացիս 10:13)

2.- Ուստի, եղբայրներ, քանի որ Աստուած ա՛յնքան ողորմած եղաւ մեզի հանդէպ կ՛աղաչեմ, որ դուք ձեզ Աստուծոյ ընծայէք, որպէս կենդանի զոհ մը իրեն վերապահուած, որովհետեւ ատիկա է Աստուծոյ ուզած հոգեւոր պաշտամունքը (Հռոմ 12:1):

3.-Տէրը զիտէ աստուածապաշտները փրկել իրենց փորձութիւններէն (Բ. Պետրոսի 2:3):

Երանի՛ այն մարդուն, որ կը տոկայ փորձութեան, որովհետեւ փորձութենէն յաղթական դուրս եկողը, որպէս մրցանակ պիտի ստանայ այն կեանքը, որ Տէրը խոստացաւ տալ զինք սիրողներուն: Բայց փորձութեան մէջ եղող ոեւէ մէկը թող չըսէ, թէ Աստուած է որ զինք կը փորձէ, որովհետեւ Աստուած մասնակից չէ փորձութիւններուն որոնք չարէն կու գան, ո՛չ ալ ինք մարդիկը փորձութեան կ'ենթարկէ: Իւրաքանչիւր մարդ կը փորձուի իր իսկ ցանկութիւններէն տարուելով ու խաբուելով: Կարդալ նաեւ՝ Յակոբոս 1:2-18:

ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ



ա.- ԳԻՇԵՐԱՅԻՆ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ, որ կը մատուցուի ի դէմս Հօր Աստուծոյ:

Անցեալի այս ժամերգութիւնը կը կատարուէր յատկապէս վանական կեանքէն ներս, տակաւին լոյս չբացուած, եւ քանքաքա լուսակցիներ շրթներէն բառերը կ'արձագանգէին.- «Տէր, եթէ զըրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ գօրհնութիւնս քո»

բ.- ԱՌԱՒՕՏԵԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ, որ կը մատուցուի ի դէմս Որդւոյն Աստուծոյ:

Կը կատարուէր վաղ առաւօտեան, երբ հորիզոնը շառագունելու կը սկսէր եւ խաւարը տեղի կու տար բացուող լոյսին: Առաւօտեան ժամերգութիւնը կը սկսի հետեւեալ գեղեցիկ մաղթանքով.- «Լցաք առաւօտու ողորմութեամբ քով, ցնծացաք եւ ուրախ եղաք զամբնայն աւուրս կենաց մերոց...»...

ԱՐԵՒԱԳԱԼԻ ԺԱՄ.ՇԱՐՈՒՆԱԿԵԼԻ

ՀԱՍՅԷ.

ՃՐԱԳ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud, P.O.Box 80810 -Tel/Fax:01-258300- facebook-ի էջ jcrak ճրագ թերթ



ԸՈՒ ԽՕՍԵՂ ԽՄ ՈՏԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽՂՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս, 119-105)

ԺԴ. ՏԱՐԻ

ԿՈՐԱԿԻ, 25 ՅՈՒՆԻՍ 2021

ԹԻՒ 30

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԾԱՇԱՀՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ Եւ. 5-10.1: Ա. Կր. 6.15-7.11: ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՍԱՐԿՈՍԻ 19.3-12

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՍԱՐԿՈՍԻ 19.3-12

Փարիսեցիներ Զիսուսը փորձելու մտադրութեամբ մօտեցան անոր եւ հարցուցին. «Իրատունք ունի՞ մէկը ոեւէ պատճառով իր կիներ արձակելու»:

Զիսուս անոնց պատասխանեց. «Չէ՞ք կարդացած Սուրբ Գիրքերուն մէջ, թէ Աստուած սկիզբէն արու եւ էգ ստեղծեց մարդիկը եւ ըսաւ անոնց. "Այս պատճառով այրը պիտի ձգէ իր հայրն ու մայրը եւ իր կնոջ միանայ, եւ երկուքը մէկ մարմին պիտի ըլլան": Հետեւաբար այլեւս երկու չեն, այլ մէկ մարմին: Ուրեմն ոեւէ մէկը թող չբաժնէ անոնք, որ Աստուած միացուց»:

Փարիսեցիները դարձեալ հարցուցին. «Հապա ինչո՞ւ Մովսէս օրէնք սահմանեց՝ բաժանման թուղթ տալ կնոջ եւ արձակել զայն»: Զիսուս պատասխանեց. «Մովսէս ձեր խստասրտութեան պատճառով արտօնեց արձակել ձեր կիները, սակայն ստեղծագործութեան ժամանակ արձակելու խօսք չկար: Գիտցէք նաեւ, թէ ով որ իր կիներ կ'արձակէ առանց պռոնկութեան պատճառի եւ ուրիշ մը կ'առնէ՝ շնութիւն ըրած կ'ըլլայ եւ ով, որ արձակուած կիներ կ'առնէ՝ ան ալ շնութիւն ըրած կ'ըլլայ»:

Աշակերտները ըսին Զիսուսի. «Եթէ ամուսնութիւնը այդպէս դատասպարտութեան պատճառ կրնայ ըլլալ այր մարդուն եւ կնոջ համար, աւելի լաւ է չամուսնանալ»:

Զիսուս ըսաւ. «Բայց ամէն մարդ չի կրնար առանց ամուսնութեան մնալ, այլ՝ միայն անոնք, որոնց Աստուած կարողութիւն տուած է: Որովհետեւ մարդիկ չեն ամուսնանար այն պարագաներուն, երբ ծնունդով ներքինի են, կամ մարդոց կողմէ ներքինի եղած են եւ կամ իրենք զիրենք ներքինի դարձուցած են Աստուծոյ արքայութեան համար: Ով որ կրնայ ընդունիլ իմ հաստատումս, թող կատարէ զայն»:

ԳՐԻԳՈՐԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Վրթանէսի անդրանիկ որդին, Գրիգոր Լուսաւորիչի թոռնիկ, որ ըստ պատմութեան Խորենացիի կողմէ, եպիսկոպոս ձեռնադրուեցաւ Փայտակարան նահանգին, կամ ըստ յետագոյն վկայութեանց, Վրաց եւ Ադուանից: Իր դէմքը մեր եկեղեցական պատմութեան մէջ կը ներկայացնէ Հայ Եկեղեցւոյ կողմէն դրացի հեթանոս ազգերուն մէջ քրիստոնէութիւնը քարոզելու համար ի գործ դրուած ջանքը, որ յաճախ նահատակութիւններու ալ պատճառ դարձաւ: Հետեւաբար, կը պատմելի իրեն համար, թէ անարժան ցեղապետներու դէմ կշտամբող դիրք բռնած ըլլալու համար ձուլ ագիի կապուելով քաջկոտած է քարերու եւ թուփերու վրայէն, Կասպից ծովուն մօտ Վատնեան դաշտին մէջ եւ այսպէս մեռած եւ Փոքր Սիւնիքի Ամարաս աւանին մէջ թաղուած է իր սարկաւազներուն ձեռքով: Իսկ Ե. դարուն, Ադուանից Վաչագան թագաւորին օրով իր նշխարները գտնուած ըլլալով, անոնց վրայ եկեղեցի մը շինուեցաւ Ս. Գրիգորիս անունով, 489-ին:

ԳՆՆԻԷԼ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Յուսիկի յաջորդ կը հրաւիրուի Դանիէլ ասորի եպիսկոպոսը, որ Լուսաւորիչի աշակերտներէն կը նկատուի, եւ կառավարիչն էր Տարօնոյ վանքին: Սրբակեաց անձի մը համբաւն ունէր ան եւ հեթանոսներու մէջ քրիստոնէութիւն քարոզած էր, իսկ ծերութեան օրերուն միայնացած կ'ապրէր Տարօնոյ Դրախտ Հացեաց կոչուած վանքին մէջ:

Այսօր հեղինակաւոր օտարական մը կաթողիկոսական աթոռ բարձրացնելով հաւանական է, որ Տիրան նպատակ ունէր Լուսաւորիչի ցեղէն խելու կաթողիկոսական իշխանութեան ժառանգութիւնը: Դանիէլ սակայն առաջին օրէն զգացուց, թէ այդ տեսակետով փնտոտուած անձը չէր ինքը: Երբ ընտրուելէ վերջ առաջին անգամ տեսաւ Տիրանը, սաստիկ յանդիմանեց զայն՝ յանիրաւի սպաննած ըլլալուն համար Յուսիկը: Ասոր համար թագաւորը խեղդամահ ընել տուաւ զայն, 348-ին: Երկու աշակերտները, Եպիփան եւ Շաղիտա թաղեցին զայն իր մեծարանին մէջ, Հարֆ գաւառի Հաղեաղ Դրախտ աւանին մէջ:

ԱՌԱՒՕՏԵԱՆ ԱՂՕԹՔ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ (ՍԱՂՄՈՍ 3)

Տէ՛ր, ինչքան շատ եմ գիտ նեղողները, ինչքան շատ եմ ինձի դէմ ելողները: Շատերը ինձի համար կ'ըսեն. «Անկարելի է, որ Աստուած զինք փրկէ»: Բայց դուն ո՛վ Տէր, դո՛ւն ես պաշտպան վահանս, դո՛ւն ես փառքս, գլուխս բարձր պահողը: Ամբողջ ձայնով Տիրոջ աղաղակեցի եւ իր սուրբ լեռնէն պատասխան տուաւ ինձի: Ես կը պառկիմ, կը քնանամ վստահ, որ գիշերն ամբողջ Տէրը զիս կը պահպանէ: Ուստի բնա՛ւ չեմ վախնար բիրաւոր այն մարդոցմէ, որոնք ամէն կողմէ զիս կը պաշարեն: Ե՛լ, ո՛վ Տէր, փրկէ՛ զիս, ո՛վ իմ Աստուածս, ապտակ մը տո՛ւր թշնամիներուս, փրկէ՛ ամբարիշտներուն ակոսները: Փրկութիւն դո՛ւն կուտաս, Տէ՛ր, թող օրհնութիւնդ ժողովուրդիդ վրայ ըլլայ:

ՀՈԳԵՒՈՐ ՊՍՏԳԱՍ

ԴՈՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ ԶԵՈՔՆ ԵՍ ՈՐՈՎ ՔՐԻՍՏՈՍ ԿԸ ԳՈՐԾԷ

Մարիամ ըսաւ սպասաւորներուն. «Ինչ որ ըսէ ձեզի՝ կատարեցէք»: Մեծն Կիւրեղ կ'ըսէ թէ հոս յիշուած «սպասաւորներ» բառին համար գործածուած է Յունարէն «Տիաքոնիս» բառը: Բառ մը, որ Նոր Կտակարանի եկեղեցին կը գործածէ սարկաւազներուն համար, որոնք կը ծառայէն Աստուծոյ խորանին (ինչ որ կ'ըլլայ այսօր), եւ որոնք կը ծառայէն աղքատներուն (Գրծ 6.1) (ինչ որ դադրած է այսօր): Հիմնուելով այս բացատրութեան վրայ, կրնանք ըսել, որ այստեղ յիշուած սպասաւորները կը ներկայացնեն Քրիստոսի ծառաները, որոնց միջոցաւ Քրիստոս կը հասնի կարիքաւորներուն, հիւանդներուն, աղքատներուն եւ որբերուն:

ՄԵՐ ՍՈՐՎԵԼ ԻՔ

ՀՈԳԵՒՈՐ ԴԱՍԸ

Սիրելի ընթերցող, դուն Քրիստոսի սպասաւորներուն խումբին մաս կը կազմէ՞ս: Քրիստոս քու ալ միջոցաւ կը հասնի՞ այլոց կարիքներուն: Քու ալ միջոցաւ կը տարածէ՞ իր ուրախութիւնը, իր խօսքը, իր սէրը: Թոյլ կուտա՞ս, որ քու ձեռքովդ սրբէ արցունք մը կամ կշտացնէ անօթի մը:

ԵԹԷ ԿԱՍ ԵՐԲ ԿՈՒՉԵՍ...

ԵԹԷ ԿՈՒՉԵՍ ԱՏՏՈՒԾՈՅ ՓՎՈՔԸ ՃԱՆՉՆԱԿ ԱՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՄԷՋ, ԿԱՐԿԱՎ՝ ՍԱՂՄՈՍ 29

Հոչակեցէ՛ք, ո՛վ երկնային եակներ, Տիրոջ փառքն ու գօրութիւնը հոչակեցէ՛ք: Հոչակեցէ՛ք Տիրոջ փառաւոր անունը, երկրպագեցէ՛ք անոր՝ իր շքեղ սրբարանին մէջ:

Տիրոջ ձայնը ջուրերուն վրայ կը թնդայ: Մեր փառաւոր Աստուածը ինք կ'որոտայ, անոր ձայնը ծովերուն վրայ կը տիրէ: Տիրոջ ձայնը ահաւոր է եւ մեծափառ: Անոր ձայնէն կը կոտորին ծառերը, կը կոտորին մինչեւ իսկ Լիբանանի մայրիները: Անոր ձայնէն Լիբանանի լեռները հորթերու պէս կը ցատկոտեն, Հերմոն լեռը կը ցատկոտէ վայրի ցուլի ձագին պէս:

Տիրոջ ձայնէն փայլակ ու շանթ կը ցայտէ: Անոր ձայնէն անապատն իսկ կը դողայ, նոյնիսկ Կադէշի անապատը կը սարսի: Տիրոջ ձայնէն կաղնիները կը սարսին, եւ անտառի տերեւները կը թափին, իսկ անոր տաճարին մէջ ամէն ինչ անոր փառքը կը պատմէ: Տէ՛րն է, որ կ'իշխէ ովկիանոսներուն վրայ, իր գահին բազմած՝ իրրեւ թագաւոր յաւիտեան: Տէրը գօրութիւն պիտի ըլլայ իր ժողովուրդին, եւ օրհնէ զայն՝ խաղաղութիւն պարգեւելով:

ՄԻՇՏ ՍԱՂՄՈՍ ԿԱՐԿԱՆՔ